№ 220 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5 1901 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5 № 220

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկ.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լաւ նշաններ են.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց Թատրօն. Նամակ Սղնախից. Նամակ Արդուինից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ Անգլիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մխիթարեանների յօբելեանը.

ԼԱՒ ՆՇԱՆՆԵՐ ԵՆ

Սկսել են բացվել նոր տիպի գիմնազիաներ, որոնք տարբերվում են եղածներից իրանց ծրագրով և ուսման եղանակով: Մինիստրութիւնը համակրութեամբ է վերաբերվում այն նոր փորձերին, որոնք կատարվում են կրթական աշխարհում և որոնց միջոցով կարելի է ժամանակով պարզել, թէ դպրոցների որ կազմակերպութիւնն է նպատակայարմար մատաղ սերնդի կրթութեան համար:

Մի տարի առաջ, երբ ժողովրդական լուսաւորութեան նոր մինիստրը սկսեց իր գործունէութիւնը և ձեռնարկեց մի շարք բարեփոխութիւններ ծրագրելու գործին, շատերը վախենում էին, որ մի դուցէ մինիստրի բարի ցանկութիւնները մնան միայն բարի ցանկութիւններ և երբեք չարժանանան իրական գործադրութեան: Մանաւանդ այդ երկիւղը մեծանում էր այն պատճառով, որ մի քանի ծրագիրների առիթով լսվում էին բազմաթիւ հակասական կարծիքներ և նրանց մշակութիւնը պահանջում էր երկար տշխատանք ու ժամանակ:

Սակայն խոստացած բարեփոխութիւններից մի քանիսը սկսվում են իրագործվել: Ճիշդ է արմատական մեծ փոփոխութիւններ տեղի չունեն, բայց միթարական է և այն, որ արդէն մի քանի նոր ձեռնարկութիւններ խրախոյս են գտնում մինիստրութեան կողմից:

Մինչև այժմ ժողովրդական լուսաւորութեան գործը այնքան խիստ կերպով կաշկանդված էր իր ընդհանուր բնաւորութեամբ, որ բարեփոխութեան կուսակիցների համար շատ դժուար էր տատանել և երերել հին շինուածքը: Այդ պատճառով նոյն իսկ այն փոքր փոփոխութիւնները, որոնք այժմ տեղի ունեն, այն նոր դրոյթները, որոնք այժմ բացվում են, պէտք է համարվեն նշանաւոր փաստեր: Այժմ հասարակութեան մէջ սկսում է վստահութեան զգացմունք, որ սկսված գործը չի մեռնի և թէև դանդաղ քայլերով առաջ կերթայ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ԹԱՏՐՈՆ

«Կառապան Հենշէլ» դրամա 5 գործողութեամբ Գ. Հաուպտմանի

Գերհարդ Հաուպտման՝ չը նայելով իր դեռ եւս երիտասարդ հասակին՝ Գերմանիայի ժամանակակից ամենամեծ դրամատուրգն է: Շլէզիայի փոքրիկ կուրորտներից մէկում ծնված, ուր իր հայրը մի հիւրանոց էր պահում, նա մատաղ հասակից սկսած ականատես է լինում իր շրջապատող կեանքի, իրականութեան բուն պատկերին. նա առիթ է ունենում դիտել այդ կեանքի սուր հակասութիւնների, զեղխութեան եւ զրկանքի, փարթամութեան եւ աղքատութեան ուժգին ընդհարման ամենօրեայ, դուցէ եւ յաւիտենական ողբերգութիւնը: Իրականութեան անջինջ նկարը շատ վառ գոյներով է դրոշմվում այս զգայուն արուեստագէտի յիշողութեան մէջ: Դիտելու սուր ընդունակութեան հետ միասին նա աչքի է ընկնում նաեւ իր վերին աստիճանի տպաւորվող հոգով. նա միայն անտարբեր դիտողի, արձանագրողի դեր չէ կատարում, այլ գիտէ զգալ, յուզվել, փոթորկվել: Հաուպտմանի արուեստն ահա իր այս զգայուն հոգու հայելին է: Նրա համար ներքին մի պահանջ է կեանքի դիտողութիւնների հետ միասին տալ մի միտք, գաղափար, տենդենցիա: Նա իր ընդհանուր իդէալները սովորաբար սոցիալական խնդրի բովիցն է խլում եւ կեանքի ու արուեստի մէջ շարունակ տրամադիր է մի ներքին, անխզելի կապ մատնանիշ անել: Այս տեսակ առանձնայատկութիւններով օժտված մի դրամատուրգ անպայման հակված պէտք է լինէր դէպի նատուրալիզմ: Ինչպէս իր ոճը նատուրալիստական է, այնպէս էլ դրաման՝ սոցիալական: Հաուպտման, իբրեւ սոցիալական դրամայի ականաւոր ներկայացուցիչ, տարբերվում է այդ նոյն դրամայի միւս ներկայացուցիչներից նրանով, որ նա ուժեղ կերպով հակված է դէպի սոցիալական տենդենցիան, դէպի հասարակական իդէալները. նա անհատականութեան պաշտամունքի հետեւողներից, Նիցշէով յափշակվողներից չէ. նրա նուրբ, քնքոյշ հոգին զրկվածների, հալածվածների, աղքատների ցաւովն է տառապում: Այս տառապանքի ամենաուժեղ արտայայտութիւնն է իր հռչակաւոր «Զուլհակները» («Die Weber»): Այս դրամայով Հաուպտման իր նատուրալիզմը կատարեալ վարպետութեան հասցրեց: Այնուհետեւ գրականութեան եւ արուեստի նոր, բօսանտիկ հոսանքների ազդեցութեան տակ՝ նա բաւականաչափ շեղվեց իր նախկին ոճից. այս շեղումը նկատելի է մանաւանդ «Խորտուզված զանգակի» մէջ, որի լոյս տեսնելուց յետոյ (1896) նատարալիզմի հակառակորդները մեծ հրճուանքով գրական այս «տգեղ» ուղղութեան անկումն էին յայտարարում: Բայց այս ցնծութիւնը ժամանակաւոր էր միայն. 1899-ին տաղանդաւոր դրամատուրգը առակների բօսանտիկ աշխարհից նորից դարձրեց իր աչքը դէպի կեանքի եռուն հոսանքը: Նա գրեց «Կառապան Հէնշէլ»:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Սեպտեմբերի 17-ին

Արդէն հաղորդել էինք, որ Թիֆլիսի կօնսիստորիան, հիմնված յուլիսի 1-ին կայացած ծխականների ժողովի վճռի եւ եկեղեցական յանձնաժողովի երեք անդամների կազմած արձանագրութեան վրա, կարգադրել էր, որ Նիկողայոս Ամիրխանեան՝ որ մոմապահեստի կառավարիչն է, պարտաւոր է երկու շաբաթվայ ընթացքում հաշիւ տալ եկեղեցական յանձնաժողովին: Այս առիթով Սղնախի գործակալը դիմեց Ամիրխանեանին առաջարկելով յանձնել մոմապահեստը իր հաշիւներով վերոյիշեալ յանձնաժողովին, սակայն նա չը հնազանդվեց այդ կարգադրութեան. ուստի յանձնաժողովի չորս անդամները, գործակալի նախագահութեամբ, սեպտեմբերի 12-ին կազմեցին արձանագրութիւն եւ ուղարկեցին դարձեալ կօնսիստորիային, խնդրելով, որ վերջինը դիմէ նահանգապետին, որպէս զի նա հարկադրէ Ամիրխանեանին յանձնել մոմապահեստը իր հաշիւներով եկեղեցական յանձնաժողովին, քանի որ Նիկողայոս Ամիրխանեան վարում է գործավարի պաշտօն տեղիս գաւառական վարչութեան մէջ եւ այդպիսով ենթակայ է նահանգապետի իրաւասութեան: Այդ արձանագրութիւնից երեւում է հետեւեալը:

1899 թ. օգոստոսի 23-ին եկեղեցական յանձնաժողովը յանձնել է մոմապահեստի կառավարութիւնը անդամ Նիկողայոս Ամիրխանեանին այն պայմանով, որ նա պարտաւոր էր եթէ ոչ շաբաթը մի անգամ, գոնէ ամիսը մի անգամ հաշիւ ներկայացնել յանձնաժողովին արդարացուցիչ թղթերով, սակայն նա, զանազան անհիմն պատճառաբանութիւններով, ձրգձգել է հաշիւ տալը յանձնաժողովին, անցկացնելով այսպիսով երկու տարի: Այս առիթով յանձնաժողովը շատ անգամ պահանջել է նրանից հաշիւ, իսկ նա միշտ յետաձգելիս է եղել հաշուետուութիւնը: Սրանից յետոյ Ն. Ամիրխանեան սկսել է չը ճանաչել իրան մոմապահեստի կառավարիչ եւ զանազան ընտրող յանձնաժողովի իրաւունքը եւ պահանջելիս է եղել ծխականների ժողով, որ կայացաւ յուլիսի 1-ին, որտեղ Ամիրխանեան բացարձակ յայտնել է, թէ ինքը պարտաւոր չէ հաշիւ տալ ոչ հասարակութեան եւ ոչ յանձնաժողովին, այլ ս. Կարապետ եկեղեցու երէցփոխ բժիշկ Մովսիսեան: Ժողովը, մանրամասն իմանալով գործի դրութիւնը, վճռել էր՝ պարտաւորացնել Ն. Ամիրխանեանին անյապաղ հաշիւը յանձնել յանձնաժողովին, մանաւանդ որ նրա անդամներից երկուսի՝ Յ. Եզիազարեանի եւ Վ. Աւագեանի աշխատութեամբ վերակազմվել է մոմապահեստ, որոնք իրանց անձնական պատասխանատուութեամբ պարտք էին արել մանաւոր մարդկանցից եւ դրանով հատատել մոմապահեստը:

Մարտի 28-ին կայացած յանձնաժողովի նիստում Ն. Ամիրխանեան տուել է բանաւոր հաշիւ մոմապահեստի դրութեան վերաբերմամբ, որի մասին կազմվել է արձանագրութիւն, վաւերացրած նաեւ իր ստորագրութեամբ: Այդ բանաւոր հաշուից երեւացել է, որ Ամիրխանեան իր կառավարութեան միջոցին՝ այն է 1899 թ. օգոստոսի 23-ից մինչեւ 1901 թ. մարտի 20-ը, ձեռք է բերել 1160 ր. 80 կ. մեղրամոմ. բացի 1½ պուդ 32 բուբլանոց մեղրամոմից, մնացածը պուդը 11—14 բուբլիանոց է եղել: Մոմի վաճառումից գոյացել էր 1975 ր. 45 կ: Ս. կարապետ եկեղեցու վրա պարտք էր հաշուել 212 ր. 50 կ. իսկ Նաստմխարի ուխտատեղու վրա՝ 20 ր. ընդամենը վաճառված մոմի գուման մի խումբ:

Աթոռները գրաւել էին Աբրահայրը, Վեհափառ Կաթողիկոսի ներկայացուցիչը, պատրիարք Էմմանուէլեանի ներկայացուցիչ Թուպեան արքեպիսկոպոս, քաղաքապետի փոխանորդ Կատելլի, Բոլդինի հրամանատարը, երեսփոխական ժողովի անդամ Գալլի, Թիւրք հիւպատոսը, ռուսական հիւպատոսի ներկայացուցիչը, հայագէտ պրոֆ. Կոնիբիր ընտանիքով, Պադուայի բժշկական համալսարանի ուսուցիչներից հայազգի դոկտոր Երուանդ Ասլան, եւ ուրիշ տեղերից եկած ազգայիններ, ինչպէս՝ պ. Գրիգոր Քեօրոզլեան Սկատէրինօդարից, իր ընտանիքով, պ. Գէորգ Զուպաճեան, Ֆրանսիայից, եւ այլն եւ այլն:

Հանդէսը բացվեց իտալական ազգային քայլերգով, որ ողջունվեց ծափահարութիւններով:

Առաջին խօսողն էր գեր. Սրբահայրը, որ Միաբանութեան կողմից ողջունելով այլ եւ այլ երկիրներից եկած նուիրակներին, յայտնեց իր ուրախութիւնը, որ ազգը չը թերացաւ յարգելու Մխիթարի յիշատակը, ուստի ամենքին առանձին շնորհակալութիւններ յայտնելով վերջացուց այսպէս իր զգայուն եւ անկեղծ խօսքը. «Հաճի ընդունել եւ հայոց ազգիս Վեհափառ Տէր Տէր Մկրտիչ՝ Միաբանութեանս խորին շնորհակալեաց հաւատիքը, փոխանակ դի բարձր խորհրդով եւ օրինակելի եղանակաւ՝ հաճեցաւ յարգել միաբանութեանս երկդարեան վաստակը եւ պատուել մեր այս հանդէսը իր արժանաւոր նուիրակաւ: Անթերկայ եղէք, սրբազան

*) Այս նամակը նոր ստացանք, մինչդեռ նա պիտի լինէր վերջին երկու նամակներից առաջ:
Խմբ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

V *)

Երկուշաբթի, սեպտեմբերի 9-ին (Ն. ա.), առաւօտեան պատարագից յետոյ ժամի 10½-ին, բացվեց բուն հանդէսը, Վանքի «գիտութեանց դահլիճ» ասված մեծ սրահում, որ զարդարվել էր խիստ շքեղ կերպով: Սեղանի վրա դրված էին յօբելեանի առթիւ ստացված բոլոր նուէրները.—1) ոսկիէ թանգագին մի սկիհ, Պապի կողմից զրկված: 2) Կրկնագիր մի հին մագաղաթեայ Շարակնոց, հիմքը յունարէն, պ. Գր. Խալաթեանցի կողմից: 3) Յովհաննէս Լազարեանի եւ նոյն տոհմի հոգաբարձուների մի քանի անդամների մեծադիր վեմատիպ պատկերներ. չքադրամներ Լազարեան Ճեմարանի հիմնադիրների, ոսկեզօծ եւ արծաթած. մի օրինակ Լազարեան Ճեմարանի հնագոյն հայ գրչագիր Աւետարանի լուսատիպը, փառակազմ: 4) Մետաքսէ հիւսված մի գորգ, Ագանայի (Կիլիկիա) Հայ-հոռոմէականաց առաջնորդ Թեոդեզն արքեպիսկոպոսից. (գորգը բանել են նոյն քաղաքի որբանոցի աշակերտուհիները): 5) Երկու ընկուզենիի սախտակներու վրա չքեղ կերպով նկարված Մխիթարի խմբատուն խօսքերից, գրված Ֆիլիպէից (Բուլգարիա), պ. Արամ Սահակեանի կողմից: 6) Լուսինը նոր ծագելիս Սեւանայ լիճը ներկայացնող մի նկար, պ. Գ. Բաշինջաղեանցից (Պարիզ): 7) Էլի մի գորգ հետեւեալ գրութեամբ—«1701—1901. Մխիթար Աբբահայր անմահ», Խաչիկ խան Սարաճեանի կողմից (Թաւրիզ): 8) Կալկաթայում տպված այլ եւ այլ գրքեր, պ. Մ. Սեթեանի կողմից (Կալկաթա): 9) Հայ վանքերի եւ տեսարանների նկարներ, երկու հատոր, հ. Գաբրիէլ վ. Նահապետեանի կողմից (Թիֆլիս): 10) Մխիթար Աբբահօր յիշատակին նուիրված «Քննական պատմութիւն ԺԹ. դարու հայ դպրութեան» անուն մի հեղինակութիւն, հեղինակի եւ տպագրողի կողմից: 11) Հայկական հին օրէնքների վերաբերեալ մի համառօտ ուսումնասիրութիւն, Կ. Յ. Բասմաջեանից: 12) Թովմա Ագուինացու ձեռագիրների մի լուսանկար ալբոմ, Վենետիկի Բենեդիկտեան միաբանութեան կողմից: 13) Պարիզի վերջին արուեստահանդէսի նկարներ, երեք փառակազմ հատորով եւ մի օրինակ զինուորական նշանաւոր անձնաւորութիւնների նկարները պարունակող ալբոմ, պ. Գր. Նիկողիմոսեանից (Աղեքսանդրիա): 14) պ. Լինչի վերջերս հրատարակած Armenia երկհատոր աշխատութիւնը, հեղինակից: 15) Դարձեալ մետաքսեայ փոքր մի գորգ եւ արծաթեայ մի մատնատուփ, պ. Ա. Զաժչեանից (Կ. Պոլիս): 16) Մի գեղեցիկ, հիանալի նրբութեամբ ու ճաշակով գծված մանրանկար տախտակ, որի մէջ գրված են շատ խորհրդաւոր տեսարաններ եւ ազգային նշանաւոր բանաստեղծներից կտորներ. մի անկիւնում վեհապանծ Արարատը եւ Էջմիածինը, որից մեկնող հեռագրական թելերը հասնում են մինչեւ ս. Ղազար կղզին. միւս տեղում Հայաստանի աւերակներ. մի ուրիշ տեղում Մխիթարեան գրեթէ բոլոր հայրերի եւ նրանց հեղինակութիւնների անունները. Մխիթար Աբբահօր նկարի կողքին մեր սիրելի Նահապետի նկարը եւ իր աշխատութիւնների անունները. դէնը՝ հրաշալի կերպով նկարված մի յաղթական կամար, որի վրա զետեղված են տոհմային զանազան դրօշակներ. դէսը՝ Հայաստանի ոգին մելամաղձոտ կերպով նայում է. Պարիզի Մուրատեան վարժարանի կողքին Վենետիկի Մուրատ-Ռափայէլեանը, եւ այլն եւ այլն: 17) Ամենից յետոյ պէտք է յիշեմ Իտալիոյ Մայր թագուհու նուէրը, որ դեռ չէ հասել. դա մի թանգագին վարագոյր լինելու է, ս. Ղազարի հայ եկեղեցու աւագ խորանին համար. վրան բանվում է Սավոյայի տան զինանշանը եւ հետեւեալ արձանագրութիւնը—Margherita di Savoia Begina Madre d'Italia ai Padri Mechitaristi nel secondo centenario della fondazione 8 settembre 1901. այսինքն՝ «Մարգարիտա Սավոյայի, Մայր թագուհի Իտալիայի, Մխիթարեան հայրերին, հիմնարկութեան երկրորդ հարիւրամեակի առթիւ—8 սեպտեմբերի 1901».

Սրահում՝ Մխիթարի կիսարձանի պատուանդանը զարդարել էին նոյնպէս գորգերով:

Այս օրվայ համար մասնաւոր կերպով բերված էր Վենետիկ քաղաքից երաժշտական նշանաւոր մի խումբ:

Աթոռները գրաւել էին Աբբահայրը, Վեհափառ Կաթողիկոսի ներկայացուցիչը, պատրիարք Էմմանուէլեանի ներկայացուցիչ Թուպեան արքեպիսկոպոս, քաղաքապետի փոխանորդ Կատելլի, Բոլդինի հրամանատարը, երեսփոխական ժողովի անդամ Գալլի, Թիւրք հիւպատոսը, ռուսական հիւպատոսի ներկայացուցիչը, հայագէտ պրոֆ. Կոնիբիր ընտանիքով, Պադուայի բժշկական համալսարանի ուսուցիչներից հայազգի դոկտոր Երուանդ Ասլան, եւ ուրիշ տեղերից եկած ազգայիններ, ինչպէս՝ պ. Գրիգոր Քեօրոզլեան Սկատէրինօդարից, իր ընտանիքով, պ. Գէորգ Զուպաճեան, Ֆրանսիայից, եւ այլն եւ այլն:

Հանդէսը բացվեց իտալական ազգային քայլերգով, որ ողջունվեց ծափահարութիւններով:

Առաջին խօսողն էր գեր. Սրբահայրը, որ Միաբանութեան կողմից ողջունելով այլ եւ այլ երկիրներից եկած նուիրակներին, յայտնեց իր ուրախութիւնը, որ ազգը չը թերացաւ յարգելու Մխիթարի յիշատակը, ուստի ամենքին առանձին շնորհակալութիւններ յայտնելով վերջացուց այսպէս իր զգայուն եւ անկեղծ խօսքը. «Հաճի ընդունել եւ հայոց ազգիս Վեհափառ Տէր Տէր Մկրտիչ՝ Միաբանութեանս խորին շնորհակալեաց հաւատիքը, փոխանակ դի բարձր խորհրդով եւ օրինակելի եղանակաւ՝ հաճեցաւ յարգել միաբանութեանս երկդարեան վաստակը եւ պատուել մեր այս հանդէսը իր արժանաւոր նուիրակաւ: Անթերկայ եղէք, սրբազան

ժարի հետ կազմում 2207 ր. 95 կ.։ Բացի ծախսած 1160 ր. 80 կ. մեղրամոմ ձեռք բերելու համար՝ Ամիրխանեան ծախսել է երգեցիկ խմբի եւ այլ մանր ծախսերի համար 381 ր. 16 կ. եւ խնայողական գանձարանում ունեցել է 400 ր. իր անունով։

Քննելով Նիկողայոս Ամիրխանեանի առաջադրած բանաւոր հաշիւը, յանձնաժողովն եկել է այն եզրակացութեան, որ գանձապահ Ամիրխանեանի մօտ պէտք է մնար առձեռն դրամ 2226 ր. 28 կ., այն ինչ նա ունեցել է խնայողական գանձարանում միայն 400 ր.։ Ուրեմն, Ամիրխանեանի վրա մնում է եկեղեցական փող, բացի վերոյիշեալ 400 ր., 1826 ր. 28 կ., չը հաշուելով սրա հետ այս տարվայ մարտի 28-ից մինչեւ սեպտեմբերի 12-ը վաճառած մոմի արդիւնքը եւ սկզբից մինչեւ այժմ տուփերից գոյացած գումարը։

Ի նկատի ունենալով այս բոլոր հանգամանքները, յանձնաժողովը որոշել է՝ ճանաչել գանձապահ եւ մոմապահեստի կառավարիչ Նիկողայոս Ամիրխանեանի գործունէութիւնը վնասակար, աւելացնելով եւ այն վճիռը, որ նամակիս սկզբում յիշատակված է։

Եկեղեցական յանձնաժողովի այս վճռի վրա անհրաժեշտ է անյապաղ լուրջ ուշադրութիւն դարձնել։ Կարեւոր ենք համարում աւելացնել, որ Նիկողայոս Ամիրխանեան սեպտեմբերի 4-ին ընտրվեց երկրորդ կանդիդատ քաղաքագլխի, ստանալով 8 ատիտակ եւ 7 սեւ քուէ...

Ց. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

Սեպտեմբերի 7-ին

Գ. Մ. Ոսկանեան Կարսից գրած իր նամակում, որ լոյս տեսաւ «Մշակ»-ի 193 համարում, ցաւ է յայտնում Դիւրլիկեան կարապետ վարդապետի Կարսից հեռանալու համար։ Ցիրաւի, եթէ Կարսի հայ-կաթոլիկ համայնքը երկար տարիների ընթացքում հազիւ է գտել իր պաշտօնին նուիրված արժանաւոր մի քահանայ եւ այսօր զրկված է նրանից, դա անշուշտ պիտի ցաւ պատճառէր նրա ծխին։ Սակայն աւելի ցաւալի է տեսնել Արդուինի հայ-կաթոլիկների մեռած դրութիւնը, չնորհիւ անպէտք, ապիկար հոգեւորականութեան։

Արդուինի մօտաւորապէս մի հազար տուն կազմող հայ-կաթոլիկ համայնքը մօտաւորապէս ոչ մի առաջադիմութիւն չունի. նա սովորում է միմիայն եկեղեցի գնալ եւ լսել դը-ժոխքի սոսկալի տանջանքների զարհուրեցուցիչ նկարագրութիւններն ու պատմութիւնները, ուրիշ ոչինչ։ Թէեւ մխիթարական է տեսնել ինտելիգէնտ երիտասարդութեան բարի ձգտումները, սակայն նա փոխանակ ռամիկ ժողովրդի փոած գաղափարի դէմ կուելու, կըռւում է իր հոգեւորականութեան ֆանատիկոսութեան, վնասակար ուղղութեան դէմ եւ դժուար է լինում յաղթանակել։ Ապա ուրեմն Արդուինը, որ մեր չրջանի հայ-կաթոլիկների կենտրոնն է, աւելի մեծ կարօտութիւն ունի կարող, լուսամիտ եւ ազատամիտ քահանայի։

Ուստի թող սթափվի մեր Արդուինի հայ-կաթոլիկ համայնքը եւ մի կողմ դնէ կոյր նախանձն ու անձնական նեղ հաշիւները ու իր համաքաղաքացի յիշեալ հայր Դիւրլիկեանին հրաւիրէ Արդուին եւ պաշտօնի ղեկը յանձնէ նրան հաւատալով ու յուսալով, որ ժողովրդի մտաւոր կեանքում մեծ յեղափոխութիւն կարող է առաջ գալ։ Ներկայումս մեզ հովող անկարող հոգեւորականութիւնը եւ մի հազար տուն կազմող ժողովուրդը ցոյց տան մեզ, թէ ինչով են պարծենում—թող այդ հրապարակ հանեն։

Հայ-կաթոլիկ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 30-ին

Կարդացի պ. Իսախանեանցի գրած հերքումը—յարձակումը իմ դէմ եւ («Մշակ» № 209) ակամայից ուղղում եմ հետեւեալ երկտողը։

Նրա ասածից դուրս է գալիս, որ մի բացակայութեան պատճառով ես զրպարտութիւն եմ տարածել նրա մասին, «չորրորդ նիստին յարմար եմ գտել չերեւալ» եւ այդ բոլորից յետոյ «հանդէս եմ եկել «Մշակի» էջերում մի նամակով»...

Նախ պիտի նկատեմ, որ ես «Մշակում» հանդէս եմ եկել ոչ թէ այդ առիթով, այլ դրանից դեռ շատ առաջ։ «Բերլինի հայ ուսանողութիւնը» խորագրով թղթակցութեանս մէջ ես արձանագրել եմ միայն չոր փաստ։ Ես կարող էի աւելին անել, բայց չարի, որովհետեւ «խընդիրը զուրկ էր հասարակական հետաքրքրութիւնից եւ ինձանից անկախ պատճառներով չէի էլ կարող»։

Առաջինը «բացակայութեան» հարցն է։ Ահա դրա էութիւնը։

Ուսանողական ժողովներից մէկում ես, իբրեւ նախագահ, հարց եմ դնում կամ բոլորովին ոչնչացնել de facto գոյութիւն չունեցող գանձարանը կամ խիստ միջոցներ ձեռք առնել այդ գանձարանը «մնօսպոլիա» դարձնողների դէմ, որոնցից շատերը նոյն իսկ ապօրինի չափով—(80—150 մարկ, այն ինչ ըստ կանոնադրութեան 50 մարկից աւելի չէ կարելի վերցնել)—պարտք են վերցրել եւ չեն վերադարձնում։ Դրանից թունդ վիրաւորվում է պ. Իսախանեան, որովհետեւ ինքն էլ ուսանողական գանձարանի պարտապանների շարքում էր գտնվում։

Այդ մի եւ նոյն նիստում ինձ առաջարկում են հետեւեալ անգամին դասախօսութիւն կարդալ. ես համաձայնում եմ, բայց դասախօսելիք նիւթի մեծ հետաքրքրութիւնն ու վիճելի կողմերն աչքի առաջ ունենալով, առաջարկում եմ իմ հայեցակէտին—(մի ուրիշ դասախօսութիւնից ժողովն արդէն ծանօթ էր հայեցակէտիս հետ)—հակառակ մի կոնտրբեֆերատ գրել կամ գոնէ որոշ—կոնկրետ փաստերով ժողովի գալ, որպէսզի վիճաբանութեան ժամանակ իզուր ժամավաճառութիւն ու դատարկ բառախաղութիւն չը լինի։ Այդ առաջարկութիւնից էլ վիրաւորվում է պ. Իսախանեան։

Ահա այդ երկու վիրաւորանքի վրէժն ինձանից լուծելու համար՝ նա «լցված» գալիս է ժողովի, նիստի կէսին յանկարծակի տեղից վեր է ցատկում եւ իր կոպիտ նկատողութեամբ դասախօսութիւնն ընդհատում։

Վրդովված ժողովականները բողոքում են դրա դէմ։ Ցանդիմանութիւնների մի ամբողջ տարափ է թափվում պ. Իսախանեանցի գլխին։ Սակայն ժամանակի սղութեան պատճառով պատժի չափը որոշելը յետաձգվում է հետեւեալ նիստին *)։

Բայց պ. Իսախանեան ճարպիկութիւն է գործ դնում վերահաս վտանգից ազատուելու համար եւ օգտուելով իր մտերիմ ընկերոջ հերթական նախագահութիւնից, մի նոր հարց է առաջ բերում, որպէս զի դրանով իր կոպտութեան դէպքը մոռացութեան քողի տակ քաշէ։ Շատ ցաւում եմ, որ ինձանից անկախ պատճառներով անկարող եմ այդ հարցն իր ամբողջութեամբ դնել ընթերցողի առաջ եւ ստիպված եմ բաւականանալ միայն նրա արտաքին կողմով։ Հարցը հետեւեալն է՝

Մի դատապարտելի վարմունքի—(ոչ կոպտութիւն)—համար ուսանողներից մէկը սաստիկ մեղադրում է պ. Իսախանեանցին։ Ես ժամանաւոր խօսակցութեան ժամանակ ասել եմ, թէ հաւատիս եմ այդ կարծիքին, իսկ յիշեալ ժողովում յայտնեցի, որ այդ բանը կը հաստատեմ, որովհետեւ ձեռքիս տակ ունեմ գրաւոր փաստեր ու բանաւոր վկայութիւններ։

Ահա այդ քննութեան ժամանակ էր, որ պ. Իսախանեան դիմեց նախ հայհոյանքների—(այդ բանը ինքն էլ խոստովանում է իր նամակում, գրելով «նախագահը առաջարկում է ինձ խուսափել սուր ոճերից»)—եւ վերջը բռունցքների... Այդ օրինակին հետեւեցին նաեւ նրա երկու ընկերները։

Պարզ է, որ այդպիսի տեսարաններից, այդպիսի վարմունքից յետոյ անաչառ ու խոհեմ անդամները պիտի դադարէին ժողովն այցելելուց։ Նրանք այդպէս էլ արին, այսինքն միմեանց ետեւից հեռացան եւ կազմակերպեցին նոր «կրթական ժողովը»։

Բայց ես երկու նամակով դիմել էի ժողովի նախագահ բժ. Լ. Քալանթարեանին եւ նրա միջոցով առաջարկել պ. Իսախանեանին, որ մեր մէջ եղած վէճի հարցը միջնորդ դատարանով քննվի։ Երկու նամակում էլ նշանակել էի որոշ ժամանակ եւ ապառնացել, որ եթէ նա դրանից էլ հրաժարվի, այն ժամանակ իմ բոլոր մեղադրանքները ապացուցված կը մնան։ Եւ նա հրաժարվեց...

Ասածիս կենդանի ապացոյցները—իմ երկու նամակները—մինչեւ օրս էլ բժ. Քալանթարեանի մօտ են...

Պատկերն ամբողջացնելու նպատակով պիտի ասեմ, որ դասախօսութեան ժամանակ կատարված գռեհկութեան համար էլ պ. Իսախանեանց վերջը ստիպված է լինում ներողութիւն խնդրել նոյն իսկ իր սիրելի «դրական ժողովից», որը այդ մասին ինձ հետեւեալն է գրում. «պ. Իսախանեանցը իր կոպիտ վարմունքի համար վերջի նիստում—իսա IV նիստ)—ինքնաբերաբար ժողովից ներողութիւն խնդրեց... Ժողովը աւելորդ է համարում դրանից խիստ բարոյական պատիժ հնարել»...

Գալով իմ առաջ բերած («Մշակ № 68) թերի գութեանը, մեր հայկական լեզուին համար պիտի մնան անկորնչելի յիշատակարաններ, հնախօս Ինճիճեանէն մինչեւ Տաշեան արեւելագէտը, Հայկազեան բառգիրքէն մինչեւ Նորայրինը, մինչեւ գիտութեանց եւ արուեստից բառգիրքը, Աւետիքեանէն (թերեւս Մխիթարեան ամենէն նուրբ եւ ատտուածաբան միտքը) մինչեւ Աւգերեան, Գաթրճեան, Հիւրմիւզեան եւ ուրիշ շատեր։ Եւ հանճարներու, կարողութիւններու այս մարդախիտ ընտրեալ խմբէն՝ ուսով չափ կամբառնան, Մխիթարեան հաւատեղութեան մը իբրեւ ամենէն աւելի փողփողուն աստղեր, Բագրատունին հ. Արսէն, հայկաբանութեան ծովը, որուն մէջ ոսկի դարէն մինչեւ երկաթինը ծաղիկներ հաւաքած կը լողայ մեծավայելուչ իրեն թարգմանութիւններուն, իրեն Հայկ դիւցազներգութեան, Զարգացելոց քերականութեան մէջ։ Միւսը, իմ ունկնդիրներս արդէն գուշակած են, սուրբ եւ պաշտելի ծերունին, Նահապետը—զոր պարգեւէ մեզի Աստուած դեռ երկայն օրերով,—որ նստած է մեր մէջ այնքան խոնարհութեամբ եւ կը լսէ մեր ճառերուն նիւթը, որոնց կէսին գրեթէ հանդիսացաւ ականատես, ինքը հզօր գործիչ, հրաշագործը՝ որ հայրենի ընդաւաղեալ աւերակներէն տուաւ չունչ եւ չողին նսեմ եւ ժանգահար նշխարներու, Ցուշիկներովը, Նուազներովը, մեծահատոր հաւաքածոյովը։ Եւ վերջապէս՝ կը մաղթենք, ասաց, մեր դիւցազն եւ թշուառ ժողովրդեան լաւագոյն օրեր,—ներկայն անտանելի է. ահա մեր աղօթքը. բայց եթէ իրեն բաղդին անիւը երթալով աւելի պիտի խրի, գիտնայ ինքը, որ յետին դրօշին ծուէնը, որ պիտի մնայ եւ պիտի ծածանի հայ ազգին յետին աւերակին վրա՝ այն Մխիթարեանն է։—Ցետոյ խօսք առաւ Թէոդորոս քահ. Ջուղայեցի եւ մի առ մի թուեց Մխիթարեանների մատուցած ծառայութիւնները, յայտնելով թէ ազգը մեծապէս երախտապարտ է Մխիթարեան հայրերին. հաղորդեց նաեւ Մանչեստրի ազգայինների անկեղծ զգացումները։ Տողերս դրողն էլ Պարիզի հայ գաղթականութեան մասին խօսելով՝ դըրուատեց միաբանութեան ազգօգուտ գործունէութիւնը եւ թարգման հանդիսացաւ Պարիզի հայոց համակրութիւններին։ Ցետոյ խօսելով իբրեւ խմբագիր «Բանասէրի»՝ հանդիսի բոլոր աշխատակիցների եւ ընթերցողների կողմից բարեմաղթութիւններ ըրաւ։—Խօսեց նաեւ պրոֆ. Ասլան, խիստ յուզիչ շեշտերով։

Աւելորդ է ասել, թէ ճառախօսութիւնների միջոցին եւ վերջը նուագածուների խումբը ածեց նշանաւոր հեղինակներից կտորներ, ինչպէս՝ Մէյէրբէրից, Վերդիից, Գունօից, Բիզէից եւ ուրիշներից։—Մի նորատեսակ երեւոյթ էր այն, որ վանքի ներկարար Սիմէոնի (իտալացի) իր կողմից հեղինակած էր մի ընտիր խմբերգ՝ Մխիթարի յիշատակին նուիրված, որը երգվեցաւ հեղինակի իսկ առաջնորդութեամբ, եւ ամենքին եռանդուն ծափահարութիւններին արժանացաւ։

Վերջին փայլն էր Բիզէի Կարմէնը, որ եւ պակը եղաւ այս հանդիսին։

Կ. Ց. Բասմաջեան

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

Սեպտեմբերի 7-ին

Գ. Մ. Ոսկանեան Կարսից գրած իր նամակում, որ լոյս տեսաւ «Մշակ»-ի 193 համարում, ցաւ է յայտնում Դիւրլիկեան կարապետ վարդապետի Կարսից հեռանալու համար։ Ցիրաւի, եթէ Կարսի հայ-կաթոլիկ համայնքը երկար տարիների ընթացքում հազիւ է գտել իր պաշտօնին նուիրված արժանաւոր մի քահանայ եւ այսօր զրկված է նրանից, դա անշուշտ պիտի ցաւ պատճառէր նրա ծխին։ Սակայն աւելի ցաւալի է տեսնել Արդուինի հայ-կաթոլիկների մեռած դրութիւնը, չնորհիւ անպէտք, ապիկար հոգեւորականութեան։

Արդուինի մօտաւորապէս մի հազար տուն կազմող հայ-կաթոլիկ համայնքը մօտաւորապէս ոչ մի առաջադիմութիւն չունի. նա սովորում է միմիայն եկեղեցի գնալ եւ լսել դը-ժոխքի սոսկալի տանջանքների զարհուրեցուցիչ նկարագրութիւններն ու պատմութիւնները, ուրիշ ոչինչ։ Թէեւ մխիթարական է տեսնել ինտելիգէնտ երիտասարդութեան բարի ձգտումները, սակայն նա փոխանակ ռամիկ ժողովրդի փոած գաղափարի դէմ կուելու, կըռւում է իր հոգեւորականութեան ֆանատիկոսութեան, վնասակար ուղղութեան դէմ եւ դժուար է լինում յաղթանակել։ Ապա ուրեմն Արդուինը, որ մեր չրջանի հայ-կաթոլիկների կենտրոնն է, աւելի մեծ կարօտութիւն ունի կարող, լուսամիտ եւ ազատամիտ քահանայի։

Ուստի թող սթափվի մեր Արդուինի հայ-կաթոլիկ համայնքը եւ մի կողմ դնէ կոյր նախանձն ու անձնական նեղ հաշիւները ու իր համաքաղաքացի յիշեալ հայր Դիւրլիկեանին հրաւիրէ Արդուին եւ պաշտօնի ղեկը յանձնէ նրան հաւատալով ու յուսալով, որ ժողովրդի մտաւոր կեանքում մեծ յեղափոխութիւն կարող է առաջ գալ։ Ներկայումս մեզ հովող անկարող հոգեւորականութիւնը եւ մի հազար տուն կազմող ժողովուրդը ցոյց տան մեզ, թէ ինչով են պարծենում—թող այդ հրապարակ հանեն։

Հայ-կաթոլիկ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 30-ին

Կարդացի պ. Իսախանեանցի գրած հերքումը—յարձակումը իմ դէմ եւ («Մշակ» № 209) ակամայից ուղղում եմ հետեւեալ երկտողը։

Նրա ասածից դուրս է գալիս, որ մի բացակայութեան պատճառով ես զրպարտութիւն եմ տարածել նրա մասին, «չորրորդ նիստին յարմար եմ գտել չերեւալ» եւ այդ բոլորից յետոյ «հանդէս եմ եկել «Մշակի» էջերում մի նամակով»...

Նախ պիտի նկատեմ, որ ես «Մշակում» հանդէս եմ եկել ոչ թէ այդ առիթով, այլ դրանից դեռ շատ առաջ։ «Բերլինի հայ ուսանողութիւնը» խորագրով թղթակցութեանս մէջ ես արձանագրել եմ միայն չոր փաստ։ Ես կարող էի աւելին անել, բայց չարի, որովհետեւ «խընդիրը զուրկ էր հասարակական հետաքրքրութիւնից եւ ինձանից անկախ պատճառներով չէի էլ կարող»։

Առաջինը «բացակայութեան» հարցն է։ Ահա դրա էութիւնը։

Ուսանողական ժողովներից մէկում ես, իբրեւ նախագահ, հարց եմ դնում կամ բոլորովին ոչնչացնել de facto գոյութիւն չունեցող գանձարանը կամ խիստ միջոցներ ձեռք առնել այդ գանձարանը «մնօսպոլիա» դարձնողների դէմ, որոնցից շատերը նոյն իսկ ապօրինի չափով—(80—150 մարկ, այն ինչ ըստ կանոնադրութեան 50 մարկից աւելի չէ կարելի վերցնել)—պարտք են վերցրել եւ չեն վերադարձնում։ Դրանից թունդ վիրաւորվում է պ. Իսախանեան, որովհետեւ ինքն էլ ուսանողական գանձարանի պարտապանների շարքում էր գտնվում։

Այդ մի եւ նոյն նիստում ինձ առաջարկում են հետեւեալ անգամին դասախօսութիւն կարդալ. ես համաձայնում եմ, բայց դասախօսելիք նիւթի մեծ հետաքրքրութիւնն ու վիճելի կողմերն աչքի առաջ ունենալով, առաջարկում եմ իմ հայեցակէտին—(մի ուրիշ դասախօսութիւնից ժողովն արդէն ծանօթ էր հայեցակէտիս հետ)—հակառակ մի կոնտրբեֆերատ գրել կամ գոնէ որոշ—կոնկրետ փաստերով ժողովի գալ, որպէսզի վիճաբանութեան ժամանակ իզուր ժամավաճառութիւն ու դատարկ բառախաղութիւն չը լինի։ Այդ առաջարկութիւնից էլ վիրաւորվում է պ. Իսախանեան։

Ահա այդ երկու վիրաւորանքի վրէժն ինձանից լուծելու համար՝ նա «լցված» գալիս է ժողովի, նիստի կէսին յանկարծակի տեղից վեր է ցատկում եւ իր կոպիտ նկատողութեամբ դասախօսութիւնն ընդհատում։

Վրդովված ժողովականները բողոքում են դրա դէմ։ Ցանդիմանութիւնների մի ամբողջ տարափ է թափվում պ. Իսախանեանցի գլխին։ Սակայն ժամանակի սղութեան պատճառով պատժի չափը որոշելը յետաձգվում է հետեւեալ նիստին *)։

Բայց պ. Իսախանեան ճարպիկութիւն է գործ դնում վերահաս վտանգից ազատուելու համար եւ օգտուելով իր մտերիմ ընկերոջ հերթական նախագահութիւնից, մի նոր հարց է առաջ բերում, որպէս զի դրանով իր կոպտութեան դէպքը մոռացութեան քողի տակ քաշէ։ Շատ ցաւում եմ, որ ինձանից անկախ պատճառներով անկարող եմ այդ հարցն իր ամբողջութեամբ դնել ընթերցողի առաջ եւ ստիպված եմ բաւականանալ միայն նրա արտաքին կողմով։ Հարցը հետեւեալն է՝

Մի դատապարտելի վարմունքի—(ոչ կոպտութիւն)—համար ուսանողներից մէկը սաստիկ մեղադրում է պ. Իսախանեանցին։ Ես ժամանաւոր խօսակցութեան ժամանակ ասել եմ, թէ հաւատիս եմ այդ կարծիքին, իսկ յիշեալ ժողովում յայտնեցի, որ այդ բանը կը հաստատեմ, որովհետեւ ձեռքիս տակ ունեմ գրաւոր փաստեր ու բանաւոր վկայութիւններ։

Ահա այդ քննութեան ժամանակ էր, որ պ. Իսախանեան դիմեց նախ հայհոյանքների—(այդ բանը ինքն էլ խոստովանում է իր նամակում, գրելով «նախագահը առաջարկում է ինձ խուսափել սուր ոճերից»)—եւ վերջը բռունցքների... Այդ օրինակին հետեւեցին նաեւ նրա երկու ընկերները։

Պարզ է, որ այդպիսի տեսարաններից, այդպիսի վարմունքից յետոյ անաչառ ու խոհեմ անդամները պիտի դադարէին ժողովն այցելելուց։ Նրանք այդպէս էլ արին, այսինքն միմեանց ետեւից հեռացան եւ կազմակերպեցին նոր «կրթական ժողովը»։

Բայց ես երկու նամակով դիմել էի ժողովի նախագահ բժ. Լ. Քալանթարեանին եւ նրա միջոցով առաջարկել պ. Իսախանեանին, որ մեր մէջ եղած վէճի հարցը միջնորդ դատարանով քննվի։ Երկու նամակում էլ նշանակել էի որոշ ժամանակ եւ ապառնացել, որ եթէ նա դրանից էլ հրաժարվի, այն ժամանակ իմ բոլոր մեղադրանքները ապացուցված կը մնան։ Եւ նա հրաժարվեց...

Ասածիս կենդանի ապացոյցները—իմ երկու նամակները—մինչեւ օրս էլ բժ. Քալանթարեանի մօտ են...

Պատկերն ամբողջացնելու նպատակով պիտի ասեմ, որ դասախօսութեան ժամանակ կատարված գռեհկութեան համար էլ պ. Իսախանեանց վերջը ստիպված է լինում ներողութիւն խնդրել նոյն իսկ իր սիրելի «դրական ժողովից», որը այդ մասին ինձ հետեւեալն է գրում. «պ. Իսախանեանցը իր կոպիտ վարմունքի համար վերջի նիստում—իսա IV նիստ)—ինքնաբերաբար ժողովից ներողութիւն խնդրեց... Ժողովը աւելորդ է համարում դրանից խիստ բարոյական պատիժ հնարել»...

Գալով իմ առաջ բերած («Մշակ № 68) թերի գութեանը, մեր հայկական լեզուին համար պիտի մնան անկորնչելի յիշատակարաններ, հնախօս Ինճիճեանէն մինչեւ Տաշեան արեւելագէտը, Հայկազեան բառգիրքէն մինչեւ Նորայրինը, մինչեւ գիտութեանց եւ արուեստից բառգիրքը, Աւետիքեանէն (թերեւս Մխիթարեան ամենէն նուրբ եւ ատտուածաբան միտքը) մինչեւ Աւգերեան, Գաթրճեան, Հիւրմիւզեան եւ ուրիշ շատեր։ Եւ հանճարներու, կարողութիւններու այս մարդախիտ ընտրեալ խմբէն՝ ուսով չափ կամբառնան, Մխիթարեան հաւատեղութեան մը իբրեւ ամենէն աւելի փողփողուն աստղեր, Բագրատունին հ. Արսէն, հայկաբանութեան ծովը, որուն մէջ ոսկի դարէն մինչեւ երկաթինը ծաղիկներ հաւաքած կը լողայ մեծավայելուչ իրեն թարգմանութիւններուն, իրեն Հայկ դիւցազներգութեան, Զարգացելոց քերականութեան մէջ։ Միւսը, իմ ունկնդիրներս արդէն գուշակած են, սուրբ եւ պաշտելի ծերունին, Նահապետը—զոր պարգեւէ մեզի Աստուած դեռ երկայն օրերով,—որ նստած է մեր մէջ այնքան խոնարհութեամբ եւ կը լսէ մեր ճառերուն նիւթը, որոնց կէսին գրեթէ հանդիսացաւ ականատես, ինքը հզօր գործիչ, հրաշագործը՝ որ հայրենի ընդաւաղեալ աւերակներէն տուաւ չունչ եւ չողին նսեմ եւ ժանգահար նշխարներու, Ցուշիկներովը, Նուազներովը, մեծահատոր հաւաքածոյովը։ Եւ վերջապէս՝ կը մաղթենք, ասաց, մեր դիւցազն եւ թշուառ ժողովրդեան լաւագոյն օրեր,—ներկայն անտանելի է. ահա մեր աղօթքը. բայց եթէ իրեն բաղդին անիւը երթալով աւելի պիտի խրի, գիտնայ ինքը, որ

*) Այս դէպքը պաշտօնապէս արձանագրված և վաւերացրած է ամբողջ ժողովի կողմից։ Արձանագրութիւնը գտնվում է ուսանող Ներսէս տարկ. Տէր-Միքայէլեանցի մօտ։

Տէր Գէորգ, միաբանութեան անպատում ուրախութեան՝ զձեզ իրեն հանդիսակից ունենալուն, որ երբէք պիտի չի մոռանայ ձեր չքնաղ բարեսիրութիւնը։—Հաճեցէք ազգիս յայլ եւ այլ աշխարհաց հաւատհաւաքեալ նուիրակք, տանել առ այն մեր սիրեցեալ ազգայինս միաբանութեանս խոր չնորհակալութիւններ եւ հաւատալ իրենց փոխադարձ մեր մեծ հաւակրանքը, եւ թէ ինչպէս մինչեւ ցարդ՝ այսուհետեւ ալ խոչք եւ խութք պիտի չը կարենան կեցունել զմեզ՝ եռանդագին ազգին բարւոյն եւ սիրոյն նուիրվելու։—Գէորգ եպ. Իսթիճեան անմիջապէս յետոյ կարդաց Վեհափառի կօնդակը, որով զինքը ներկայացուցիչ կը կարգէր յօբելեանն հանդէսին եւ իր հայրական օրհնութիւնները կը զրկէր բովանդակ միաբանութեան։ Սրբազանը իր կողմից խօսելով մաղթեց կրկին յօբելեաններ եւ անխոնջ գործունէութիւն «յօգուտ եւ ի փառս ազգին»։ Երկարթեց կրկին յօբելեաններ եւ անխոնջ գործունէութիւն «յօգուտ եւ ի փառս ազգին»։ Երկար ծափահարութիւններով ընդունեցին սրբազանի խօսքերը։—Ռուպեան գերապայծառ իր կարգին խօսեց միաբանութեան գործունէութեան վրա։—Հ. Մանուէլ վ. Քալունի իրեն յատուկ գրաւիչ շեշտովը յայտնեց՝ իտալերէն լեզուով՝ յանուն գեր. Իգնատիոս աբբահօր եւ ամբողջ միաբանութեան՝ անկեղծ չնորհակալութիւններ ներկայ հանդիսականներին եւ Վենետիկ քաղաքին, յիշեցնելով այս վերջինիս այն փոխադարձ աջակցութիւններն, որ արած են իրարու։

Մասնաւոր կերպով արժանի էին ուշադրութեան հ. Արիստակէս վ. Գասպանտիլեանի ընտիր ներբողականը եւ յայտնած տեսութիւնները։ Ճառախօսն ասաց. «Եթէ ոչ ուրիշ բան, մեր հնութեան գոյութիւնը միայն բաւական է տալու մեզի քիչ մը աւելի ազատ ոգի կլլելու իրաւունք. ունէինք մեր ազգութեան անունով հոգ մը—յիշելն անգամ մեզի հիմա ելեռն է—եւ տարիներու, դարերու պանծալի պատութիւն մը, զոր գիտենք եւ կը ճանչնանք այնպէս՝ ինչպէս մեր յատուկ էութիւնը. պէտք է համոզուին մեր նոր Ցազկերտները՝ թէ հալածանք չը կայ, գործիք չը կայ, որ կարենայ քերթել հանել մեր մտքին տախտակին վրայէն մեր յիշողութիւնը»։ Դարձեալ. «Ինձի համար արեւը, որ կը ծագի հոս՝ իմ հայրենեացս ճառագայթներէն է. այս ճոխացած բուսաբերութիւնը՝ փոված քղանց մը Այրարատու դաշտին. այս յատակը, որ խանդէս կը պակսի ոտքիս տակ, եւ այս ձեղունը, դէպի որուն կը ծաւալի դողդոջուն ձայնս, կուգայ ինձի թէ այն բնակարաններէն մէկն է, ուր երբեմն մեր թարգմանիչները, մեր պատմիչները իրենց գլուխը կը ծռէին մագաղաթներու վրա. իմ չորս կողմս պարուրած օդը Մասիսու սարերէն է՝ զոր կը շնչեն այստեղ դիս շրջապատողները, որոնք իմ լեզուս կը խօսին, կը հաակնան իմ բառերս, իմ արիւնէս են. եւ հոն այն եկեղեցին, իրեն առ Աստուած մրմունջներովը, շարականներովը կը յափշտակեն, կը փոխադրեն զմեզ այն նուիրատուները, ուր երգեց Շնորհալի մը, ուր Նարեկացի մը աղօթեց։ Իտալական հողին վրա Հայաստանի բեկոր մը. իր է այս՝ չօշափելի, պատրանք մը չէ, եւ այս հրաչքը Մխիթար է, որ գործեց։ Այն ատուար հատորներէն մեծ կէսը մեր ազգացելոց քերականութեան մէջ։ Միւսը, իմ ունկնդիրներս արդէն գուշակած են, սուրբ եւ պաշտելի ծերունին, Նահապետը—զոր պարգեւէ մեզի Աստուած դեռ երկայն օրերով,—որ նստած է մեր մէջ այնքան խոնարհութեամբ եւ կը լսէ մեր ճառերուն նիւթը, որոնց կէսին գրեթէ հանդիսացաւ ականատես, ինքը հզօր գործիչ, հրաշագործը՝ որ հայրենի ընդաւաղեալ աւերակներէն տուաւ չունչ եւ չողին նսեմ եւ ժանգահար նշխարներու, Ցուշիկներովը, Նուազներովը, մեծահատոր հաւաքածոյովը։ Եւ վերջապէս՝ կը մաղթենք, ասաց, մեր դիւցազն եւ թշուառ ժողովրդեան լաւագոյն օրեր,—ներկայն անտանելի է. ահա մեր աղօթքը. բայց եթէ իրեն բաղդին անիւը երթալով աւելի պիտի խրի, գիտնայ ինքը, որ

ճշտութեանը, պէտք է կրկնեմ, որ «գրական ժողովի» անդամների թիւը իսկապէս 13 է եւ ոչ 15, որովհետեւ անդամ չէ կարելի հաշուել 2 տիկինների (ուսանողների կանայք), որոնցից մէկը այդ ժամանակ նստած էր Կովկասում եւ միայն սեպտեմբերի վերջում եկաւ Բերլին, իսկ միւսը թէեւ ապրում էր Բերլինում, բայց ոչնչով ցոյց չէր տալիս իր անդամակցութիւնը։ Չէ որ ուսանողի կին լինել դեռ չէ նշանակում ուսանողական ժողովի անդամ համարվել...

Ղարաբաղցիների թիւը, իմ ունեցած ցուցակի եւ հաւաքած տեղեկութիւնների համեմատ, դարձեալ մնում է 10-ը, բայց եթէ նոյն իսկ 8-ը հաշուենք, հարցի էութիւնը բնաւ չի փոխվի, որովհետեւ ատուար մեծամասնութիւնը (13-ից—8-ը) դարձեալ ղարաբաղցիները կը մնան։ Եթէ բժիշկ ուսանողների թիւը 4 հաշուենք, այն ժամանակ քիմիկոսների թիւը պէտք է մէկով աւելացնել եւ վերջ ի վերջոյ կը կը ատացվի իմ նախորդ նամակի եզրակացութիւնը, այսինքն «գրական ժողովի 13 անդամներից 10-ը զուտ գործնական առարկաներ են սովորում, իսկ միայն երեքը—հումանիտար առարկաներ»։

Ինչ վերաբերում է «կրթական ժողովին» պէտք է նկատեմ. որ միայն պ. Իսախանեանցի լոգիկայի տէր մարդիկ կարող են ենթադրել, թէ «նրա գոյնը կարելի է որոշել անդամակցող սարկաւագների ու տիրացուների թուով» որովհետեւ այդ ժողովի 15 անդամներից միայն մէկն է սարկաւագ, նա էլ լեզուագիտութիւն սովորող եւ միայն մէկն է դպիր, այն էլ հասարակական գիտութիւններ սովորող։

Sapienti sat...

Ե. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքային վարչութեան վերջին նիստում քաղաքագլխի պաշտօնակատար Շեստակով զեկուցեց Թիֆլիսի նահանգապետի առաջարկութիւնը ձայնաւորների ընտրութիւններ կատարելու մասին Թիֆլիսում 1901—1905 թուականների համար։ Քաղաքային վարչութիւնը, քննելով այդ հարցը, որոշեց յայտնել բոլոր տեղական լրագիրներում, որ անչարժ կայքերի տէրերը, որոնք ցանկութիւն ունեն մասնակցել ձայնաւորների ընտրութիւններին, վճարեն իրանց կայքերի վրա մնացած ապակիկները մինչեւ 1902 թուականի օգոստոսի 1-ը եւ որ այն անձինք, որոնք մի քանի տուն կամ մի քանի առեւտրական-արդիւնագործական ձեռնարկութիւններ ունեն քաղաքի զանազան մասերում, յայտնեն, թէ ընտրողական որ չրջանում կամենում են մասնակցել։ Որոշում կայացաւ նաեւ չուտով ձեռնամուխ լինելու ընտրողական ցուցակների կազմութեան։

Այսօր, հոկտեմբերի 5-ին, տեղի կունենայ Մարիամեան-Անանեան ուսումնարանի բացումը։ Ուսման սկզբից առաջ կը կատարվի մաղթանք, որին ներկայ կը լինեն ուսումնարանի հոգաբարձութեան անդամները, ուսուցչուհիները եւ աշակերտուհիները։

Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօր, հոկտեմբերի 5-ին, կաթնատնտեսական ժողովում

կը կարդացվեն զեկուցումներ կաթնատնտեսական գիտելիքները տարածելու, մասցու աննասպահութիւն զարգացնելու եւ քաղաքների մատակարարութիւնը կանոնաւորելու խնդիրների մասին։ Նիստը տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում, երեկոյեան 8 ժամին։ Նիստին կարող են մասնակցել նաեւ կողմնակի անձինք։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, մի շրջաբերականով յայտնելով նահանգապետներին եւ շրջանների կառավարիչներին, թէ քաղաքային եւ զեմստվոյի հիմնարկութիւնները արտասահմանից բերել են տալիս այնպիսի առարկաներ, որոնք հեշտութեամբ կարող էին պատրաստվել Ռուսաստանում, առաջարկեց յանձնարարել այդ հիմնարկութիւններին, որ ռուսական արդիւնագործութեան շահերը աչքի առաջ ունենալով, իրանց պատուէրները տան ռուսական գործարաններին։

—

Անցեալ սեպտեմբեր ամսի ընթացքում Կովկասեան ցուցահանդէսը այցելել են 113,384 անձինք։ Ցուցահանդէսի վարչութիւնը նոյն ամսի ընթացքում ստացել է մուտքի տոմսակների վաճառումից 20,000 ռուբլի։

—

Զորեքշաբթի, հոկտեմբերի 3-ին, կաթնատնտեսական ժողովում կարդացվեցին երկու զեկուցում անասնաբոյժ Լանգի՝ տաւարի թոքախտի հետազօտութեան եւ Ալ. Քալանթարի՝ կովկասեան տեղական կաթնատնտեսութեան զարգացման մասին։ Ժողովին ներկայ էին մինչեւ 40 անձ՝ մեծ մասը կաթնատնտեսներ եւ անասնաբոյժներ։ Զեկուցումները առաջ բերին տաք վիճաբանութիւններ։ Լանգ իր զեկուցման մէջ հաղորդեց, որ նա Քութայիսում փորձեր է արել քննելու անասուններին տուբերկուլին կոչված նիւթի միջոցով եւ նկատել է, որ տաւարի մէջ պատահում են թոքախտով հիւանդներ։ Մինչեւ այժմ դեռ յայտնի չէ, թէ որքան տարածված է Կովկասում տաւարի թոքախտը, բայց նրա գոյութիւնը անկասկածելի է, ուստի անհրաժեշտ է տուբերկուլինի միջոցով կատարել հետազօտութիւններ։ Ժողովականները, աչքի առաջ ունենալով, որ եւրոպական մի քանի պետութիւններ, ինչպէս են Դանիան, Շվէդիան եւ մասամբ Գերմանիան, նաեւ Ռուսաստանի մի քանի նահանգները, լուրջ ուշադրութիւն են դարձրել այդ հիւանդութեան վրա եւ ձեռնարկել են մի շարք հետազօտութիւններ եւ մաքառման միջոցներ, որոշում կայացրին, որ մանրամասն հետազօտութիւններ կազմակերպվեն եւ Անդրկովկասում։ Ալ. Քալանթար իր զեկուցման մէջ նկարագրեց կովկասեան կաթնային արդիւնքները, այն է կաթը, սերը, մածունը, քեֆիրը, իւղը եւ պանիրները, ցոյց տուեց նրանց արժանաւորութիւնները եւ պակասութիւնները եւ յայտնեց մի քանի խորհրդածութիւններ նրանց բարւոքման եւ կատարելագործութեան վերաբերութեամբ։ Ժողովականները, համակրելով տեղական արդիւնքների կատարելագործութեան առաջարկին՝ այն եզրակացութեան եկան, որ պէտք է հիմնել փորձնական կայաններ մի շարք փորձեր անելու նպատակով։

—

Տնայնագործական կոմիտէը մտադրութիւն ունի հիմնել Թիֆլիսում տնայնագործական թանգարան, որի համար արդէն սկսել է գնել տնայնագործական զանազան արդիւնքներ։ Ի միջի այլոց, կոմիտէը մտադրութիւն ունի գնել թանգարանի համար եւ այն իրեղէններից, որոնք ցուցադրված են Կովկասեան ցուցահանդէսի տնայնագործական բաժնում։ Բացի դրանից կոմիտէը ձեռնարկում է տնայնագործական արդիւնաբերութեան լուրջ ուսումնասիրութիւն մեր երկրում։

—

Զինուորական-բժշկական գիտական կոմիտէը, որոշելով իր անդամներից մէկին՝ Բաշչեւակուն, ուղարկել Բերլին անձամբ տնօրինելու Վիրխովի 80-ամեայ յօբելեանը, մի եւ նոյն ժամանակ վճռեց դիմել զինուորական մինիստրին եւ նրա միջոցով խնդրել, որ հռչակաւոր գիտնականը վարձատրվի շքանշանով տառապող մարդկութեան մատուցած ծառայութիւնների համար։

—

Մեզ հաղորդում են, որ Թավրիզի հայուհեաց բարեգործական ընկերութեան եւ Ատրպատականի հայուհեաց բարեգործական ընկերութեան մէջ համաձայնութիւն է կայացել միանալու եւ կազմելու միացեալ հայուհեաց բարեգործական ընկերութիւն Ատրպատականի։ Մենք միայն շնորհաւորել կարող ենք երկու ընկերութիւնների այդ գեղեցիկ քայլը։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Առեւտրական դպրոցը, որ պէտք է բացվեր հոկտեմբերի 1-ից, եւ որի համար արդէն վարձված է բնակարան սեպտեմբերի 1-ից, կը բացվի միայն հոկտեմբերի 15—20-ին։ Տեսուչ նշանակված է Պետերբուրգի առեւտրական դպրոցի տեսչի օգնական պ. Ստեփանով, որին սպասում են այս չանի օրս։ Իսկ ուսուցչական խումբը դեռ չէ կազմված։ Առ այժմ պէտք է բացվեն միայն պատրաստական եւ առաջին դասարանը իրանց բաժանմունքներով։»

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են, որ սեպտեմբերի 17-ին Թագաւոր Կայսրը բարեհաճեց շնորհել միչման Մազիրեանին Ստանիսլաւ շքանշանի 3 աստիճանը, որպէս վարձատրութիւն այն հերոսական սիրաքաջութեան, որ նա կատարեց այս տարվայ յուլիսի 10-ին Եւպատորիայի նաւահանգստում պատահած հրդեհի ժամանակ, «Великая Княгиня Ольга» շոգենաւի վրա։ Երիտասարդ Մազիրեանը Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անդամ պ. Լեւոն Մազիրեանի որդին է եւ անմահ մարինիստ Այվազովսկու թոռը։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «11 հոգուց բաղկացած թուրք աւազակների խումբը ահա մօտ երեք ամիս է, որ մեծ վնասներ է հասցնում գաւառի ժողովրդին եւ սպանութիւններ դրում։ Ամբողջ ոստիկանութիւնը զինված մաքառում է դրանց դէմ։ Երկու կողմի մէջ նորերս տեղի ունեցած հրացանաձգութեան ժամանակ, սպանվում են մի աւազակ եւ մի չափառ. իսկ պրիստաւ Ղարագլանեանի կուռն է վիրաւորվում, որը այժմ բժշկվում է։ Աւազակները թաքնված են ճահիճների մէջ բուսած եղեգնուտներում։ Գաւառից շատ ունեւոր մարդիկ փախել են քաղաք, սպառնացող վտանգից ազատ մնալու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՑԻՑ

Խաղաղութեան կոնգրէս Գլասգովում

IV

Իր վերջին, սեպտեմբերի 13-ի նիստում կոնգրէսը զբաղվեց գլխաւորապէս այն կոչի խմբագրութեամբ, որ պէտք է ուղղէր ազգերին եւ ապա վերջնականապէս խմբագրեց արդէն կայացած որոշումները։ Ազգերին ուղղելի կոչի (Appel auf nations) խմբագրութիւնը յանձնված էր A յանձնաժողովին, որի խմբագրած ընագիրը կոնգրէսը ընդունեց միաձայն եւ անփոփոխ։ Ահա այդ կոչի ընագիրը։

Կոչումն ազգերին

Ամբողջ աշխարհի խաղաղութեան ընկերութիւնների X համաշխարհային կոնգրէսը, գումարված Գլասգովում 1901 թ. սեպտեմբերի 10—13-ին, իր աշխատութիւնները աւարտելուց առաջ, չէ կարող չը շեշտել պարզ կերպով այն ուղղութիւնը, որին այժմ հետեւում է խաղաղասիրական շարժումը։

Ժամանակակից հասարակութիւնները հետզհետէ ձգտում են դէպի դեմոկրատիա։ Աղքատ դասակարգի շահերը կազմում են այժմ քաղաքական մարդկանց մտահոգութեան առաջին առարկան, մինչ դիպլոմատների ճարպիկ կոմբինացիաները երկրորդ տեղն են գրաւում։ Ամեն տեղ թշուառութեան խնդիրը հրամայական եւ տարտաիելի կերպով դրվում է եւ ամեն օր սկսում են աւելի պարզ տեսնել, որ ժողովրդական մասսաներին մարդավայել կեանք հայթայթելու միակ միջոցն է վերջ դնել միջազգային անիշխանութեան։ Ժողովրդական մասսաների բարեկեցութեան խնդիրը, ինչպէս եւ քաղաքակիրթ պետութիւնների իրաւագիտական միութեան խնդիրը բացարձակապէս անբաժան են։ Եւ ճշմարիտ, այժմեան անիշխանութեան պատճառով, ոչ միայն միլիոններ եւ միլիարդներ բոլորովին անօգուտ կերպով վատնվում են զինուորական ծախքերի համար, այլ եւ, բացի դրանից, մարդիկ չեն կարողանում շահագործել այն ահագին հարստութիւնները, որոնք թաքնված են երկրի ծոցում։ Ազգերի թշնամութիւնը ամեն տեղ արգելքներ է յարուցանում աշխատաւորների անցուդարձին եւ ապրանքների շրջանառութեան եւ արտադրութիւնը զգալի կերպով պակասելով, թշուառութիւնը համաշխարհային է դարձել։

Հասել է ժամը, երբ ժողովրդական մասսաները պէտք է հասկանան, որ խաղաղութեան խնդիրը եւ հացի խնդիրը մի եւ նոյնն է։ Ինչպէս մեծ կօրդէնը կարողացաւ յաղթանակել տալ ազատ փոխանակութեան սկզբունքը, երբ ներկայացրեց նրան անգլիական ազգին պարզ ձեւով, նոյնպէս խաղաղասիրական շարժումը ձեռք կը բերէ անդիմադրելի զօրութիւն, երբ ժողովրդական մասսաները կը հասկանան, որ թշուառութեան բարձումն հընարաւոր է միայն քաղաքակիրթ ազգերի մէջ իրաւագիտական միութիւն հաստատելով։

«Անցնելով նկատումների մի ուրիշ կարգի, վերջին տարիների դէպքերի, ինչպէս եւ ներկայ տարվայ մայր պերսպեկտիվների առիթով, կոնգրէսը օգտակար է կարծում մի անգամ եւս հանդիսաւորապէս հաստատել այն ընդհանուր սկզբունքները, որ մշակել է 1891 թ-ին Հռոմում, այն է, որ 1) ամեն մի ազգի ինքնավարութիւնը անբռնաբարելի է, 2) նուաճման իրաւունքը գոյութիւն չունի, 3) ազգերը անկապտելի իրաւունք ունեն անօրինել ազատորէն իրանց վիճակը»։

Կոնգրէսն անցաւ ապա վերջնականապէս խմբագրելու իր վճիռը հայոց հարցի մասին։

Ահա այդ վճռի ընագիրը.

«Խաղաղութեան X համաշխարհային կոնգրէսը, գումարված Գլազգովում 1901 թ-ի սեպտեմբեր ամսին, նկատողութեան առնելով խաղաղութեան Միջազգային բիւրօի տեղեկագիրը, հայ հրապարակախօս Հ. Առաքելեանի յիշատակագիրը (La question Arménienne au point de vue de la paix universelle) եւ Ամերիկայի Միացեալ-Նահանգների խաղաղութեան ընկերութիւնների մի նամակը, գտնելով, որ Թիւրքիայի հայ ժողովրդի տխուր վիճակը ամենեւին չէ բարւոքվել, որ կոտորածներն եւ գազանութիւնները շարունակվում են Հայաստանում, որ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները մինչեւ այսօր ոչ մի հաւաքական ջանք չարեցին՝ վերջ դնելու համար այն սիստեմատիկական անգթութիւններին, որոնց ենթակայ է թշուառ հայ քրիստոնեայ ազգը.

«Որոշում է.—Ուղարկել մի աղերսագիր Բերլինի դաշնագիրը ստորագրող եւրոպական պետութիւններին, առաջարկելով գումարել պաշտօնական կոնֆերէնցիա՝ լուծելու հայոց հարցը, գործադրելով ըէֆօմների այն ծրագիրը, որ 1895 թ. մայիսին մշակել են ռուսաց, ֆրանսիական եւ բրիտանական կառավարութիւնները եւ որ ստացել է նոյն իսկ սուլթանի հաւանութիւնը»։

Նոյն օրը երեկոյեան, ս. Անդրէյ հօլլում կայացաւ կոնգրէսի փակման բանկէտը։

Հ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Indép. Bélge» հաղորդում է, թէ Կ. Պոլսի քաղաքական շրջաններում յամառութեամբ լուրեր են պտտում, որ իբր թէ Ռուսաստանը հակումն է ցոյց տալիս միջնորդի դեր յանձն առնելու Ֆրանս-Թիւրքական տարաձայնութիւնների մէջ։ Իբրեւ վարձատրութիւն այդ միջնորդութեան՝ Ռուսաստանը կը ստանայ Բուրգաս նաւահանգիստը։ Վրդովված այս տեղեկութիւնից՝ «Times» նկատում է, թէ բէլգիական լրագիրը անշուշտ չէ կարող երաշխաւորել այս լուրի ճշդութիւնը։ «Բուրգասի գիլումը Ռուսաստանին,—աւելացնում է «Times»,—անշուշտ քաղաքական լուրջ դրութիւն կը ստեղծէր, որովհետեւ դրանով Ռուսաստանը կը դառնար Սեւ ծովի անմիջական տէր եւ հնարաւորութիւն կունենար տիրել Կ. Պոլսին 48 ժամում»։

—«Kölnische Zeitung» հերքում է այն լուրը, որ տարածված էր Լօնդոնի լրագիրներում Կ. Պոլսում կոնֆերենցիա հրաւիրելու մասին Թիւրքիայի նահանգների դրութիւնը քննելու համար։ Ցիրաւի, մտադրութիւն կայ հրաւիրել կոնֆերէնցիա, բայց ոչ այդ, այլ սուլթանի գերիշխանութիւնը Կուէյտի վրա պահպանելու հարցի մասին։ Մակեդոնական անկարգութիւնների առիթով կոնֆերենցիա հրաւիրելու դիտաւորութիւն երբէք չէ եղել, որովհետեւ պետութիւնների շահերը այդ հարցում շատ բաղմատեսակ են եւ մի այդ տեսակ կոնֆերենցիայի հետեւանքը կը լինէին լուրջ եւ երկիւղալի բարդութիւններ։

—«Օսմանլի» լրագրին գրում են Կ. Պոլսից, թէ չը նայելով որ կառավարութիւնը ամեն կերպ աշխատում էր, որ մամուլի մէջ ոչ մի խօսք չը գրվի հայկական նահանգներում կատարվող գազանութիւնների մասին, այնուամենայնիւ գրաքննութեանը հրամայված էր թոյլ տալ մի քանի տեղեկութիւններ հասարակութեան յուզված մտքերը խաղաղացնելու համար։ Թղթակիցը հաւատացնում է, որ երբ տեղեկութիւններ են ստացվում Հայաստանում կամ Մակեդոնիայում տեղի ունեցած կոտորածների մասին, Կ. Պոլսի թիւրք ինտելիգենցիան քրիստոնեաներից ոչ պակաս զայրանում է կառավարութեան բռնած ընթացքի դէմ։ Նոյն լրագրին գրում են Թիւրքաց մայրաքաղաքից, թէ այնտեղ լուր է տարածվել մի գիշերային յարձակման մասին Թոխատի կանանց մենաստանի վրա։ Յարձակման ժամանակ կողոպտված է ֆրանսիական միսիոնարների գոյքը։ Այս առիթով պաշտօնական «Մաշիւմաթ» լրագրում երեւացին երկու յօդուածներ, որոնց մէջ հերքվում է գիշերային յարձակման լուրը, իսկ հայկական կոտորածների մասին ասված է, թէ «շնորհիւ իշխանութիւնների կողմից ձեռնարկված միջոցների, Կիանլի, Կուչխան, Իսակլիզ եւ Խիսսի գիւղերի հայ չինականների գանգատներին բաւարարութիւն է տուած եւ նրանցից յափշտակված գոյքը առնված է քիւրդերից եւ վերադարձրած տէրերին, որոնք ջերմ աղօթքներ են վերարաքում Ալլահին Փադիշահի արեւաշատութեան համար»։ Թիւրք լրագիրների ասելով, հէնց այս է այն ամենը, ինչ որ տեղի է ունեցել Հայաստանում։

—«Berliner Tageblatt» լրագիրը հետեւեալ տողերն է նուիրում գահաժառանգութեան հարցի վերաբերմամբ Աւղանիստանում։ «Հանգուցեալ էմիրը թողել է հինգ որդիներ, որոնցից աւագը՝ սարդար Խաբիբուլլա վայելում է Անգլիայի հովանաւորութիւնը, որին շատ ցանկալի է գահ բարձրացնել նրան։ Այժմ հանդէս է գալիս, սակայն, եւ մի ուրիշ թեկնածու—Իսխակխանը։ Մահմեդական բոլոր պետութիւնների մէջ չը կայ գահի անժիջական ժառանգութիւն, այլ կայ այսպէս անուանված «աւագութեան» իրաւունք։ Եթէ այսպիսի սովորութիւն լինէր եւ Աւղանիստանում, այդ դէպքում Աբդուրահմանին պէտք է յաջորդէր ոչ թէ Խաբիբուլլան, այլ Իսխակ-խանը, որպէս Աբդուրահմանի ընտանիքի աւագ-անդամ, որ այժմ ապրում է Բուխարայում ռուսաց կառավարութեան հովանաւորութեան տակ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հոկտեմբերի 3-ին վերադարձաւ Կալուգայի նահանգից Մեծ-Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ իր Օգոստափառ Ամուսնու եւ Որդոց հետ։

Հոկտեմբերի 3-ին Մեծ-Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ այցելեց հոկտեմբերի 1-ին գիտութիւնների Կայսերական ակադեմիայում բացված «Blane et noir» ցուցահանդէսը։

ՏԻՄԷՆ։ Բոլոր ձկնորսական նաւերը աջողութեամբ վերադարձան Օր գետի ատորին ընթացքից։ Բերած է 250,000 պուդ ազած ձուկ։ Ձկան որսը Օրդօրսկից ցած լաւ էր, իսկ Օրդօրսկից վերեւ—վատ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Վոլգայի վրա շոգենաւ պահողների մի խումբ, ի նկատ առնելով նաւաշնացութեան յուսահատ դրութիւնը այդ գետի վրա, Լաբիչկինի սահանքի մօտ, որտեղ ցրաերը սպառնում են տեղն ու տեղը թողնել մի քանի միլիոն պուդ բեռ, հեռագրով դիմեց հաղորդակցութեան ճանապարհների մինիստրին եւ խնդրեց ուղարկել գնդապետ Շեկսին՝ անկարգութիւնները Լաբիչկինի սահանքում բառնալու համար։

ԿԱԼՈՒԳԱ։ Գիւղատնտեսական ցուցահանդէսը փակվեց։

ԿՕԳԷՆՀԱԳԷՆ։ Էսբերգից ստացված տեղեկութիւններով՝ երէկ, գիշերվայ ժամի 2-ին, Տէրչիլինի մօտ, ֆինլանդական «Լուիս» բեռնակիր նաւը, որ գնում էր Բրէկից Մօբիլ, ընդհարվեց ռուսական «Կոնկորդիա» երկաթեայ նաւի հետ, որ սկիպիդարի բեռով Ռիգայից գնում էր դէպի Համբուրգ։ Ընդհարումը տեղի ունեցաւ 100 կիլոմէտր ափից հեռու։ Ֆինլանդական նաւը իսկոյն ջրասոյզ եղաւ։ Նրա ծառայողները, որոնք 14 հոգի էին, ազատվեցին դանիական «Վակուր» շոգենաւի միջոցով եւ տարվեցին Էսբէրգ, որտեղից նրանք, կէսօրից յետոյ, կուղարկվեն Համբուրգ դատաստանական հարցափորձի ենթարկվելու համար։ Ռուսական նաւապետը մերժեց «Վակուրի» նաւապետի առաջարկութիւնը՝ նաւի վրա առնելու եւ նրա ծառայողներին, որոնք բաղկացած էին 16 հոգուց. մի եւ նոյն ժամանակ պահանջեց, որ նրա նաւը կապվի «Վակուրի» ետեւից եւ տարվի Համբուրգ։ Այս պահանջը սակայն չը կատարվեց «Վակուրի» նաւապետի կողմից, որովհետեւ նա հակառակ էր նաւապետի ստացած հրահանգներին։ Ֆինլանդական նաւի նաւապետի գլուխը վիրաւորված է։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ Լագվայրից ստացված տեղեկութիւններով, Վէնէցուէլայի նախագահը հրատարակեց մի յայտարարութիւն, որի մէջ ասում է, որ եթէ Կոլումբիան պաշտօնական կերպով տեղեկութիւն տայ Վէնէցուէլային, թէ դիմել է Միացեալ-Նահանգների կառավարութեանը, որպէս միջնորդի, այն ժամանակ Վէնէցուէլան ուրախութեամբ կը քննէ այն

հարցը, թէ պէտք է արդեօք նա դիմէ Միացեալ-Նահանգներին, որպէս Կոլումբիայի ներկայացուցչին։ Եթէ Կոլումբիան չը պատասխանէ, այդ դէպքում դժուարութիւններ կը ծագեն։

ՊԱՐԻԶ։ Երէկ այստեղ եկաւ յունական թագաւորը եւ այցելութիւն փոխանակեց հանրապետութեան նախագահի հետ։—Երէկ Դէլկասէ բացեց արտաքին գործերի մինիստրութեան մէջ կշռի եւ չափի ընդհանուր կոնֆերենցիայի նիստերը։

ՊԵՏԵՐԲՈՐԳ։ Նորգէնչիլդ ուղեւորվեց գիտական արշաւանքի դէպի հարաւային բեւեռը. բաղմաթիւ ամբոխը ողեւորված աղաղակներով հրաժեշտ էր տալիս նրան։ Նրա հետ միասին գնացին արշաւանքի բոլոր անդամները, բացի լէյտէնանտ Դուզէից, որ կը միանայ նրանց Ֆալմուտում։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Տեղեկութիւն է ստացված, որ դանիական պետական նոր փոխառութիւնը, որ գտեղված է գլխաւորապէս Ֆրանսիայում, կը յանձնվի ֆինանսների մինիստրի կարգադրութեանը հոկտեմբերի 5-ին։

4 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ցայտարարվում է, որ Սամսոնի սանջաղը եւ Սեւ ծովի Անատոլիական ծովափերը, Իեմիլ-Իրմակ եւ Ղզրլ-Իրմակ գետերի մէջ, ճանաչված են ժանտախտի կողմից անբարեյաջող։

ՊՕՐՏՍՄՈՒԹ։ Հետախուզիչ դատարանը «Կօբրա» ականակիր նաւի խորտակման առիթով որոշում կայացրեց, թէ այդ նաւին պատահած աղէտի պատճառը նրա վատ շինվածքն էր՝ համեմատելով միւս ականակիր նաւերի շինվածքի հետ։ Դատարանը ցաւ յայտնեց, որ «Կօբրա» ընդունված էր ծովային մինիստրութեան կողմից։

ՍԻՄԼԱ։ Նոր էմիրի հրովարտակը հրապարակակս կարդացվեց Դակկայում։ Հրովարտակում ասված է, թէ զօրքի գլխաւորները եւ ազգաբնակութիւնը, ի նշան իրանց հաւատարիմ հպատակութեան զգացմունքների դէպի Խաբիբուլլա էմիրը, յանձնեցին նրան հանդուցեալ էմիրի զուրանը, սուրը եւ գոտին Մաաբ-Ի-Շէրիֆ խալիֆի միջոցով. Ապա հրովարտակում ասված է, թէ Խաբիբուլլան որոշել է բարեհաճ վերաբերվել ժողովրդին, նշանաւոր չափով կրճատել երկրի մէջ հողային հարկերը եւ աւելացնել զօրքի մէջ ծառայողների ռոճիկը։—Կանդահարում էմիրի մահվան լուրը ամենեւին յուզումներ չառաջացրեց։

ԲԵՐԼԻՆ։ Լօնդոնի գերմանական դեսպան Գացֆէլդի առողջութիւնը մինչ այն ատիճան անբաւարար է, որ, երեւի, նա կը հրաժարվի պաշտօնից։ Այն բանի վերաբերմամբ, թէ ով կը նշանակվի Նրա յաջորդ, ոչինչ յայտնի չէ։

Կ. ՊՕԼԻՍ։ Երէկ, յունական դեսպանին տրված ընդունելութեան ժամանակ, սուլթանը յայտնեց, թէ ընդհանուր ոյժերով պէտք է ձգտել աւելի որոշ համաձայնութեան երկու երկիրների մէջ, որոնց յարաբերութիւնները սակայն շատ բաւարար են։ Դեսպանը խոստացաւ տեղեկութիւն տալու իր կառավարութեան սուլթանի բարեհաճ տրամադրութեան վերաբերմամբ։

ՊԵԿԻՆ։ Կայսերական ընտանիքը սեպտեմբերի 28-ին հասաւ Տունիվանֆու, որտեղ, ճանապարհների վատութեան պատճառով, կը մնայ մի քանի օր։

ԼՕՆԴՕՆ։ Օլդերշօթից հեռագրում են, թէ տարաձայնութիւնները, որոնք վաղուց արդէն գոյութիւն ունէին Դուրգէմի եւ Վօրչէստէրշիրի գնդերի մէջ, երէկ գիշեր պատճառ դարձան յայտնի կռիւ, որի ժամանակ գործ դրվեցին սուլիններ եւ հրացաններ։ Վօրչէստէրշիրի գունդը սուլիններով յարձակում գործեց Դուրգէմի գնդի զօրանոցի վրա եւ փչրեց նրա բոլոր ապակիները։ Դուրգէմի գնդից վիրաւորված են 5 հոգի։ Թշնամի կողմերը վերջ ի վերջոյ հեռացվեցին իրարից պահակախմբերի եւ զինուորական ոստիկանութեան միջոցով։ Հետախուզիչ ատեանը նիստի ժողովվեց այդ գործով զբաղվելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Քաղաքային
ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
նորեկ աշակերտների ընդունելութեան քննութիւնները լինելու են հոկտեմբերի 27-ին եւ 29-ին։ 6—6

Ուսուցիչ Լազ. Ճեմ.

(մաթեմատ. եւ ֆիզիկայի) ընդունում է իր մօտ աշակերտներ, պատրաստում է աւարտման (հասունութեան) վկայականը ստանալու եւ միջնակարգ ու բարձրագոյն մասնագիտական (Инст. Пут. Сообщ. եւ այլն) դպրոցներ մտնելու համար։ Ցանկացողների համար հայերէն լեզու եւ կրօն։ Հասցէն՝ Москва. Армянскій пер. д. кн. Абамеликъ-Лазаревой, кв. № 30. Б. Каспарянцу. 1—3

ՎՐԱՑ ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ
Ուրբաթ, հոկտեմբերի 5-ին
Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը
կը ներկայացնէ
ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍԻ
Դրամա 4 արար. փոխ. Ա. Սարդ.-Արեւշատ.
վերջը
ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ
Վոդեվիլ 1 արար. հեղ. Նակօվնեվի. թարգմ. Վրոյրի
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։
Խումբը պատրաստվում է խաղալու «Ուրուականների յետեւից» եւ «Օրլէանի կոյսը»։
2—2

ԱՄԵՆԱԼԱՒ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Կարում են առանց որեւէ աղմուկի, դէպի երկու կողմը եւս, առաջ եւ յետ, ծախվում են հինգ տարվայ երաշխաւորութեամբ Վ. Ռէշի նոր բացված խանութում, Պեսկովսկայա փող., № 76։ 2—6

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ

մասին խորհուրդները, ամեն տեսակ խնդիրները եւ բողոքները, նոյնպէս գործերի վարելը չքաւորների համար անվարձ է։
5-դ մաս, Կատօլիչեսկայա փողոց, տ. 25։
3—3

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ
ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՏԵԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին եւ 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, նշանակված է
ԱՃՈՒՐԴ եւ ԿՐԿՆԱՃՈՒՐԴ

Ալէքսանդրոպօլի եւ Կարսի վիճակների եկեղեցիների մոմավաճառութեան կրպակները երեք տարի ժամանակով կապալով տալու։ Ցանկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ ամեն օր, առաւօտեան ժամը 10-ից սկսած։ Ցայտարարութիւններ ընդունվում են եւ կնքված ծրարով։
3—3

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ

մեդալիոնները (медальоны) արցրից նուրբ ճաշակով շինած, վաճառվում են Գր. Զալխուշեանի մօտ, հատը—5 ր., հինգ հատը 20 ր., ճանապարհածախսով։ Ով ուզում է յարգել թէ մեծ բանաստեղծի յիշատակը, թէ մեր երիտասարդ-քանդակագործ Անրէաս Տէր-Մարուքեանի տաղանդը եւ աշխատանքը եւ մի եւ նոյն ժամանակ ունենալ իր համար մի գեղեցիկ զարդ, կը շատպէ գնել այդ մեդալիոններից։
Դիմել՝ Нахичеванъ на Дону, Григорію Члахушьяну. 3—3

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԷՐ
Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեոդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դվորցովայա Նովէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։
8—100

ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏ
Երկրագործական մեքենաների եւ գործիքների

որոնք պատրաստվում են ԻՆԺԵՆԷՐ ՊԱՍՍԷԿԻ մեքենագործական եւ ձուլարանական գործարանում Բաթումում։

Գիներ՝ մտուցելով եւ կոնտէյնէրով

25 աղոցով	300 ռուբլի
35 »	425 »
50 »	550 »
60 »	600 »
80 »	700 »
Թեղիչներ	50 »
Բաժանարարներ (սորտիրովկա)	70 »
Պրէսներ խոտի եւ բամբակի համար	150 »

Գուրթաններ զանազան սիստեմների՝ մէկ պուդին 5 ր. 50 կ.

Վերոյիշեալ մեքենաների նմուշները ցուցադրված են Կովկասեան յօթելեանական ցուցահանդէսի մեքենաների եւ գործիքների բաժանմունքում, որտեղ եւ կարելի է նրանց տեսնել եւ փորձել։

Մի եւ նոյն ժամանակ հեշտ է համոզվել, որ նշանակած գները բոլորովին պատշաճ են եւ որ այդ մեքենաները, որոնք պատրաստված են լաւ ապրանքից հմուտ կերպով եւ ամուր, նշանաւոր չափով էժան են, ինչպէս ռուսաց, այնպէս էլ արտասահմանեան գործարաններում պատրաստվածներից։

Երեւանի համար ներկայացուցիչ նշանակված է ՄԵԽԱՆԻԿ ՐԱՓԱԷԼ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՒԱՌԻ ՍԱՄԱՂԱՐԻ ԳԻՒՂԻՑ։ 1—6

Խնդրեմ ուշադրութիւն դարձնէք

Ստացված է մեծ քանակութեամբ ամեն տեսակ պատրաստի ոպիտակեղէն՝ կանանց եւ տղամարդկանց, ֆուֆայկաներ, չուլկիներ, նասկիներ, ձեռնոցներ, մեսաւի կլէօնկաներ սեղանի համար, նոյնպէս բաւթաներ, զոյթաններ՝ սեփական գործարանում պատրաստված, կանանց գլխի տարքեր, այսինքն հաչիաներ, չիքիլաներ, մետաքսէ աղլուխներ եւ այլն։

Թիֆլիսի բաժանմունք Բագումի։—Պարապետ։

ԵՂԲ. ՄԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑ

Թիֆլիսի Առաջին Գորգերի Արհեստանոցը

Տեղափոխվել է Բարեսաինսկայա փողոց, № 10։

Ընդունվում են աշակերտուհիներ ՁՐԻ, 9 տարեկան հասակից։ Ցանկացողները կարող են դիմել իշխ. Մ. Թումանեանին ամենայն օր, երեկոյեան ժամը 4-ից մինչեւ 6-ը։ Արհեստանոցը յանձն է առնում նաեւ հին գորգերի կարկատելը։ (հ. չ. ե.) 2—3

Թիֆլիսի նախկին Հայոց Հրատարակչական ընկերութեան գրքերի պահեստը Թիֆլիսում յանձնված է Կենտրոնական գրավաճառանոցին,

ուր պէտք է դիմեն ցանկացողները։ Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջումն է լինում։

Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную торговлю. (տ.) 2—10

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը.

Փ ա փ ա զ ե ա ն Վ., Պատմուածքներ, Թիֆլիս, 1901 թ. գ. 50 կ.
Շ ի ր վ ա ն զ ա դ է, Նամուս, բ. տիպ. Թիֆլիս, 1901 թ. 1 ր.
Բ ո ւ դ ո ւ ղ ե ա ն Ա. բժ., 1) Մարմնամարզութիւն 25 պատկերով—20 կ., 2) Մանկավարժական համառօտ զրոյցներ—15 կ., 3) Ժառանգականութիւն եւ դաստիարակութիւն—15 կ., 4) Ով է յանցաւորը—15 կ., 5) Առողջ հոգին առողջ մարմնի մէջ—10 կ., 6) Գեղձախտ (զօլատուխա)—10 կ., 8) Մեր նեարդերը—10 կ. եւ 9) Վեներական ախտեր—5 կոպ.
Ա ր ծ ր ո ւ ն ի Վ ա հ. բ ժ., 1) Մի խմիր, բ. տիպ, նկարներով—5 կոպ., 2) Վատ ցաւ, նկարներով—6 կ. եւ 3) Ամուսնութիւն, առողջապահական էտիւդ—75 կ.։
Տ է ր-Ց ո վ հ ա ն ն ի ս ե ա ն պ. ք ա հ., 1) Աստուծոյ տաճարը—8 կ., 2) Քահանայ—15 կ. եւ 3) Եկեղեցական սուրբ պատկերներ—5 կ.
Փ ա ն ե ա ն ց Խ ա չ. ք ա հ., Մարդկային կեանքի վախճանական նպատակը, Վաղարշապատ 1901 թ., գ. 15 կ.
Այ վ ա զ ե ա ն Բ., 1) Հիւսիսի արծիւը, պատմական վէպ, Թիֆլ. 1901 թ. գ. 1 ր., 2) Աչտ Երկաթ, պատմական վէպ, բ. տիպ., գ. 1 ր.
Մ ա ր գ ա ե ա ն Լ., Հին ցաւ (հրապարակախօսական խոհեր), Մոսկվա, 1900 թ. գ. 30 կ.
Ղ ա զ ա ր ե ա ն Ց ա կ., 1) Հա վայլա, վոդ. 1 արար. 2) Կրթութիւնը խաթայ չէ, կատակերգ. 1 արար., Թիֆլ. 1901 թ. գ. 15 կ.
Վ ե ն ե տ ի կ ի Մ ի ա բ ա ն ո ւ թ ի ւ ն, Գեղունի, պատկերազարդ գեղարուեստական հրատարակութիւն, Վենետիկ 1901 թ. գ. 1 ր.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (տ.) 4—4

Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամել մրգեղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա, զէֆիր եւ այլն։

Պատուէրներով դիմել գործարան. Պավլովսկայա փողոց, սեփական տուն, տելէֆոն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տելէֆոն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլոնիական խանութներում։

Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։
62—100

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Октября 1901 г. Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.